Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
09 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Արևաշատի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար սնդամթերքի ձեռքբերման նպատակով 04 դեկտեմբերի 2025թ. կազմակերպված «ԱՄՓՀ-ԱՐՇՄ-ԳՀԱՊՁԲ-01/26» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Յուրի Սահակյան» Ա/Ձ-ն (այսուհետ նաև Մասնակից):

Մասնակցի կողմից հավելված թիվ 1. 1-ով՝ 7-րդ, 13-րդ, 14-րդ, 16-րդ, 22-րդ, 30-րդ, 35-րդ, 37-րդ, 44-րդ և 54-րդ չափաբաժինների մասով ներկայացվել է հրավերի պահանջների չհամապատասխանող տեխնիկական բնութագրեր հրավերի պահանջների համաձայն պետք էր ներկայացվել հրավերի պահանջներին համապատասխան տեխնիկական բնութագրերեր:

24. 12. 2025թ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով)՝ հիմք ընդունելով գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման (այսուհետ՝ Կարգ) 41-րդ ենթակետը՝ մասնակցին տվել է մեկ աշխատանքային օր ժամկետ՝ շտկելու գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը:

Սահմանված ժամկետում «Յուրի Սահակյան»Ա/Ձ-ի կողմից չի ներկայացվել Ընթացակարգի հրավերի Հավելված 1. 1-ի շտկված տարբերակը, այսինք գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ մասնակցի կողմից շտկումը չի կատարվել որոշել է «Յուրի Սահակյան» Ա/Ձ-ի նկատմամբ իրականացնել Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված դրույթները:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայան՝ *Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը*

չկայացած հայտարարվելու կամ ***<u>կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու</u>*** *կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կայացման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:*

Հանձնաժողովը՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 28-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի բ պարբերությամբ, 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետով՝ *եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ներառյալ այն դեպքերը, երբ սահմանված ժամկետում չի շտկում կամ ամբողջական չի շտկում հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.* և և 42-րդ ենթակետով՝ *Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է,* մերժել՝ *«Յուրի Սահակյան» Ա/Ձ* -ի կողմից ներկայացված հայտը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ բ ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը **որոշում եմ** ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմք	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝
ծածկագիրը	չափաբաժնի համարը	չափաբաժնի անվանումը	գնման գինը /ՀՀ դրամ/	Անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմանների չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
ԱՄՓՀ-ԱՐՇՄ-ԳՀԱ ՊՁԲ-01/26»	7,13,14,16,22,30,35,37,44,54	7-բուսական յուղ/ձեթ/ 13-եգիպտացորենի պահածո 14-թթվասեր 16-լոբի հատիկավոր 22-կաթնաշոռ 30-հավի կրծքամիս 35-մակարոն - 1 37-մածուն 44-պանիր լոռի 54-տոմատի մածուկ	7-28800 13-27000 14-30800 16-12750 22-148750 30-800000 35-7500 37-590000 44-320000 54-16900	«Յուրի Սահակյան» Ա/Ձ	49613738	ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար Ջիվանու փ. տ. 4	25. 12. 2025 թ.	«ԱՐԵՎԱՇԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ	Չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը	Շտկման վերջնաժամկետը եղել է 24. 12. 2025 թ. և տվյալ օրվա դրությամբ շտկումը չի կատարվել

ՏՆՕՐԵՆ՝ Ռ. ԲԱՂՐԱՄՅԱՆ